

Ա. Ա. ՐՈՋՈՅԱՆ, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրեր (1165—1178 թթ.), «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 1995, 256 էջ:

Ա. Բողոյանի գրախոսվող մենագրությունը նվիրված է Կիլիկյան Հայաստանի և Բյուզանդիայի միջեկեղեցական հարաբերությունների մի շարք հիմնախնդիրների լուսաբանմանը: XII դ. 60—70-ական թվականներին բարդ ու խճճված փոխհարաբերություններ էին հաստատվել անկախության ձգտող Կիլիկյան Հայաստանի և Մերձավոր Արևելքում, մասնավորապես Կիլիկիայում, դերիշխանության վերահաստատման քաղաքականությանը միտված Բյուզանդիայի միջև Ռադմադիականդիտական բարդ ու լարված իրավիճակում սկսվում է նաև Հայ-բյուզանդական միջեկեղեցական երկխոսությունը, որի նպատակը շահագրգիռ կողմերի եկեղեցաքաղաքական հետաքրքրություններ կայացնող մի շարք խնդիրների լուծումն էր, որոնք որոշում էին սկսված բանակցությունների ձևն ու բովանդակությունը: Խնդրո առարկա ժամանակաշրջանի հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունների վիճահարույց խնդիրների արծարծումը նորություն չէ հայագիտության մեջ: Այդ խնդիրները վաղուց ի վեր քննվում են պատմաբանասիրական գրականության մեջ՝ տեղիք տալով տարաբնույթ գիտական վեճերի ու եզրահանգումների: Աշխատության նորույթը հեղինակի գիտական հետաքրքրությունների շրջանակներում ներառված խնդիրների ու հարցադրումների պարզաբանման համար օգտագործած մեթոդն է ու կիրառած սկզբունքները, որոնք վաղուց ի վեր դարձել են եվրոպական պատմագիտական մտքի սեփականությունը: V դ. սկսած հայ մատենագրության մեջ մուտք են գործում բազմաբնույթ փաստաթղթեր (սթուղթա ընդհանուր անվանումով), որոնք ոչ միայն վավերագրագիտական ու ժանրային տեսակետից ուսումնասիրված չեն (եթե չհաշվենք Ա. Ալեքսանյանի կատարած նախնական աշխատանքը, որը վերաբերում է V դ.), այլև ցավոք սրտի, մեծ մասամբ ցայսօր չեն հրատարակվել: Այս պայմաններում հասկանալի է, որ հայագիտության առաջիկա կարևոր խնդիրներից է վավերագրերի գիտահամեմատական քննարկների կազմումը, պատմաբանասիրական քննությունը, նկարագրությունը, դասակարգումն ըստ բնույթի և հարակից մի շարք հարցերի պարզաբանումը, քանզի այն անգնահատելի նյութ կարող է մատուցել միջնադարյան Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքի, հայոց եկեղեցու միջադպրոցի և ներեկեղեցական փոխհարաբերությունների ուսումնասիրության համար:

Ա. Բողոյանի երկասիրությունն առաջին հերթին պետք է արժեքավորել այս տեսակետից որպես առաջին քայլ՝ միանշանակ արձանագրելով, որ կատարվել է հսկայածավալ աշխատանք, չանդի յուրացնելով եվրոպական պատմագիտության մեջ վավերագրագիտության բնագավառում ձեռք բերված նվաճումները, մասնավորապես բյուզանդական փաստաթղթերի նկարագրման և վերլուծման սկզբունքները, փորձ է արվում նկարագրել քննվող ժամանակահատվածի վավերագրերը և ներկայացնել դրանց տեղն ու գերը XII դ. երկրորդ կեսի հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերություններում: Մշակելով օգտագործած փաստաթղթերի վավերագրագիտական հետազոտման ընդհանուր սկզբունքները, ընդամին առաջնությունը տալով Յր. Դյուզբերի և Վ. Գրյունմեյի կաղմած ցանկերի կառուցվածքին (վերնագիր, բովանդակություն, թղթավարտ, թվական, պարագաներ, դրականություն), հեղինակը մանրակրկիտ վերլուծության է ենթարկել խնդրո առարկա պատմաշրջանում փոխանակած 25 նամակ և փաստաթուղթ: Փաստորեն վավերագրագիտական քննությունը կատարվել է երկու սկզբունքով:

ա) փոխանակված փաստաթղթերը նկարագրվել են ժամանակագրական հերթականությամբ (1165 սեպտեմբեր—1178 ապրիլի 1—25), ընդ որում առավել ուշադրության արժանացել են կառուցվածքային խնդիրները: Հետաքրքիր է, որ յուրաքանչյուր նամակի նկարագրության ժամանակ հեղինակն անդրադառնում է նաև բովանդակության բուն խնդրի և պարագաների մանրամասներին ու այս ճանապարհով էլ առ էջ հյուսում հայ-բյուզանդական բանակցություններին ներքին ու արտաքին դրդապատճառների աղբյուրագիտական հենքը՝ մենագրությունն ազատելով ոչ համակարգված բաժին ունենալու ծանրաբեռնվածությունից, իսկ առանձին բաժնում շրջանառության մեջ է դնում իր գիտարկումները և եզրակացությունները: Համեմատելիս աշխատանքի ընդհանուր կառուցվածքում և քննվող հիմնախնդիրների համատեքստում դա հիմ-

նավորված է, քանզի խնդրո առարկա թեմայի ոչ բոլոր հարցադրումներն են գիտական ուշադրության արժանացել:

բ) Փոխանակված փաստաթղթերը ենթարկվել են ձևաբանական վերլուծության, որպեսզի վերականգնվեն փոխհարաբերությունների սկզբունքները: Այստեղ էլ, դրանք ամփոփված են չորս խմբում. ա) կաթողիկոսական թուղթ առ կայսր, բ) կայսերական թուղթ առ կաթողիկոս, գ) կաթողիկոսական թուղթ առ պատրիարք, դ) պատրիարքական թուղթ առ կաթողիկոս: Նմանատիպ մոտեցումը հնարավորություն է տվել ընդհանուր հայտարարի բերել փաստաթղթերում հանդիպող մի շարք կարևոր հասկացություններ՝ վավերագրի խորագիր, թղթառաջը, մուտք, բուն խնդիր և այլք, որոնք ճանապարհ են հարթել մի շարք ուրույն եղրահանգումների համար: Փաստորեն, եթե չհաշվենք Ա. Մնացականյանի և Հ. Լևոն Զեքիյանի կատարած մասնավոր փորձերը, Ա. Բողոյանի աշխատանքն ուղի է հարթում ապագայում հայկական վավերագրերի վերլուծական-նկարագրական ցանկերը կազմելու համար:

Ձևայած հեղինակն աշխատության ներածական բաժնում թվարկում է Հայոց մատենագրության մեջ «թուղթ» ընդհանուր վերտառությամբ տարարանությամբ վավերագրերի հանդիպող անունները՝ նամակ, շրջաբերական թուղթ, տոմար և այլն, որոնցից յուրաքանչյուրը ներկայանում է որպես վավերագրի առանձին տիպ, դրանց սահմանաբաժանումը թողնում է որպես հայագիտության առաջիկա անկիթ: Մինչդեռ սպասելի էր, որ այս քննադատական գիտական հետաքրքրություններ ունեցող մասնագետը պետք է, թեկուզե հակիրճ, պարզաբաներ դրանց տարբերությունները, եկեղեցա-քաղաքական և պատմաիրավական բնույթը, կիրառման միջավայրը և սահմանները, որի անհրաժեշտությունն անընդհատ զգացվում է, քանզի փոխանակված վավերագրերում այդ անվանումներին հաճախ հանդիպում ենք:

Հետադոտման օգտագործած մեթոդի մյուս կարևորությունն այն է, որ մեղ հասած հայկական վավերագրերը մեծամասնությամբ կրոնադավանաբանական բնույթ ունեն, ուստի ժամանակի և տարածության մեջ, կախված պատմական այս կամ այն հանգամանքից, որոշակի փոփոխություններ են կրել: Վավերագրերի վերլուծման, դասակարգման կայուն և բնութագրիչ հատկանիշներ առանձնացնելու դեպքում ժամանակի և տարածության «նստվածքը» կարելի է հասկանալ ու այդ համակարգի օգնությամբ պարզել վավերականության սահմանները, հեղինակներին աշխարհայեցողության ու աշխարհընկալման աստիճանը, եկեղեցաքաղաքական հետաքրքրությունների շրջանակները, քանզի ոչ բոլոր դեպքերում են դրանք հանգես դալիս որպես գրչագրական սխալներ կամ ուղղումներ:

Մենագրություն մյուս կարևորությունն այն է, որ հեղինակն առաջինն է սեռում ուշադրություն դարձել այնպիսի խնդիրների վրա, ինչպիսիք են վավերագրերի հայերեն («Պատմա-խնդրոյ միաբանութեան») և հունարեն («Տրամախոսութեան») ժողովածուների աղբյուրագիտական, պատմահամեմատական վերլուծությունը, կազմողները, միջավայրը, ժամանակը, թարգմանիչները և վերջապես երկխոսության անմիջական մասնակիցները: Խնդրի բարդությունը, որ փորձել է հաղթահարել հեղինակը, այն է, որ բանակցությունների ոլորտ էր ներքաշվել դարաշրջանի հայ և հույն հասարակական-քաղաքական և պետական շրջանակների բավական լայն ընտրանի, որը միավորվելով մի շարք ընդհանուր սկզբունքների շուրջ տարակարծիք էր նպատակների և խնդիրների դաշտում, քանզի դիվանագիտական հարաբերությունների հետնախորքում երկու ինքնակա եկեղեցաքաղաքական համակարգեր ներկայացնող հակամետ ծրագրեր էին գործում: Հասկանալի է, որ վերջին հանգամանքն իր դրոշմն էր գնում բանակցությունների ընթացքի և բովանդակության վրա, ուստի փորձ է արվում արժեքավորել մի շարք գործուն մասնակիցների զբաղեցրած տեղն ու խաղացած դերը, ըստ այդմ էլ անձնավորվում են դիվանագիտական հարաբերությունները: Այս սկզբունքի կիրառման շնորհիվ ճշգրտվել են երկխոսությունը մասնակցած աշխարհիկ և հոգևոր բարձրաստիճան գործիչների դիրքորոշման հասարակական-քաղաքական և եկեղեցական դրդապատճառներն ու հետաքրքրությունները:

Ընդհանուր հայտարարի բերելով այս ուղղությամբ հեղինակի կատարած աշխատանքը, ցանկանում ենք մի նկատառում հայտնել: Թերևս աշխատանքն ավելի շահեր, եթե հեղինակը նկարագրելով ու վերլուծելով (ձևաբանական) փոխանակված փաստաթղթերը, դրանք դասակարգեր նաև պատմաիրավական համակարգում, քանզի թղթերն իրավական տարարանությամբ բովանդակություն և կառուցվածք ունեն, որից էլ բխում է դրա անհրաժեշտությունը: Այս դեպքում գիտական հասարակախոսությունը կունենար 1165—1178 թթ. հայ-բյուզանդական միութենական բանակցություններում փոխանակված վավերագրերի տիպաբանությունը որոշող սխե-

մատիկ աղյուսակներ, որը կօգնե՛ր հայագիտությանը՝ նմանատիպ թղթեր տիպավորելու համար: Ասվածը հիմնավոր դարձնելու համար նշենք միայն այն հանգամանքը, որ փաստաթղթերը դուրս են եկել Հռոմկլայի կաթողիկոսական, Կոստանդնուպոլսի կայսերական և պատրիարքական արքունիքներից ու եկեղեցաբնակարանական ընդհանուր բնույթի շրջանակներում առանձնանում են իրավական դաշտերով, ըստ այնմ՝ իրենց տիպերով:

Մենագրության մեջ հեղինակն առաջին անգամ փորձել է ժամանակագրական ճշգրտումներ մտցնել խնդրո առարկա պատմաշրջանի հայ-բյուզանդական եկեղեցա-քաղաքական փոխհարաբերությունների փուլերի միջև, և հիմք ընդունելով կայսրության քաղաքական հետաքրքրություններն ու ձգտումները, այն բաժանում է հինգ շրջանի, որը կրում է պայմանական բնույթ: Մեր կարծիքով, գիտական տեսակետից հետաքրքիր կլինեն նաև, եթե հեղինակն ուշադրություն դարձներ երկխոսության մյուս կողմի եկեղեցաքաղաքական ձգտումների բովանդակությանը, որը դուգահեռ սահմանաբաժանման հնարավորություն կտար, ըստ այդմ. էլ ավելի պարզ կներկայացվեր կողմերի հետաքրքրությունների փուլերի համամասնությունը և յուրաքանչյուրին յուրահատուկ փոխհարաբերությունների վարքագիծը, քանզի իրավիճակի յուրաքանչյուր փոփոխություն արագ արձագանքվում էր բանակցությունների համակարգում:

Փոխանակված թղթերի վավերագրագիտական մանրակրկիտ վերլուծությունից հետո Ա. Բոպոյանը աշխատության մյուս բաժնում քննարկում է դիվանագիտական հարաբերությունների խնդիրներին ու նպատակներին աղերսվող մի շարք կոնկրետ հարցադրումներ, մասնավորապես բանակցությունների բարձրակետ հանդիսացող Հռոմկլայի ժողովը, ճշտում դրա հրավիրման ժամանակը, աղերսվող փաստաթղթերը, այդ թվում ներսես Լամբրոնացու մի շարք երկասիրություններ, որոնց հիման վրա ժողովից մեղ հասած վավերագրերն իրավացիորեն, համակարգվում են պաշտոնական և ոչ պաշտոնական գասաշարով:

Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ փորձ է արվել աշխարհագրորեն տարազատել քաղաքական և վարչաթիվական ալն միավորները, որտեղից ժամանել էին ժողովի 33 բարձրաստիճան հոգևորականները:

Մենագրության մեջ արժեքավորելու մյուս հիմնախնդիրը կապված է Անտիոքի պատրիարքական աթոռի հետ, որն ուրույն տեղ է զբաղեցնում XII դ. երկրորդ կեսի հայ-բյուզանդական հարաբերությունների համակարգում: Չընդունելով Քաղկեդոնի IV տիեզերական ժողովի որոշումները, Հայոց եկեղեցին դարևր շարունակ մերժում էր նաև քաղկեդոնական համակարգի շրջանակներում ձևավորված և հետագայում տեսական հիմնավորում ստացած եկեղեցական այն կառուցվածքը, որն իր շրջանակներում ընլունում էր հինգ տիեզերական պատրիարքների՝ Հռոմի, Կոստանդնուպոլսի, Ալեքսանդրիայի, Անտիոքի, Երուսաղեմի: Հայոց եկեղեցու վարչաթիվական ձևավորում փոքր Ասիայում, Մերձսլոր Արևելքում և վերջապես Կիլիկիայում հայկական իշխանության կազմավորումը նախադրյալներ էին ստեղծում Անտիոքի պատրիարքական աթոռի նկատմամբ եկեղեցաքաղաքական հետաքրքրությունների համար: Փաստորեն հայոց եկեղեցին փորձում էր օգտագործել այն հանգամանքը, որ Անտիոքի աթոռի շուրջ լարված փոխհարաբերություններ էին առաջացել ուղղափառ-հունական և կաթոլիկ-հռոմեական եկեղեցիների միջև: Քննելով V—XI դդ. հայոց մատենագրության մեջ համաշխարհային եկեղեցու նվիրապետական կառույցի վերաբերյալ առկա տեղեկությունները և, իրավացիորեն, դրանք սահմանադատելով երկու պատմաշրջանի (V—VII, VIII—XI դդ.) հեղինակը հիմնահարցը վերլուծում է երրորդ փուլում (XII դ. 60—70-ական թթ.) և պարզաբանում հայոց եկեղեցու ձգտումները՝ յուրացնելու Անտիոքի պատրիարքական աթոռի եկեղեցաքաղաքական իրավասությունները: Հիմնախնդրի քննությունը, մեր կարծիքով, առավել կշահեր, եթե հեղինակն ուշադրություն դարձներ Անտիոքի պատրիարքական աթոռի նկատմամբ հայոց եկեղեցու հավանությունների նախադրյալներին և տեսական ալն գրութներին, որոնց օգնությամբ փորձ էր արվում իրավաքաղաքական հիմնավորումներ գտնել, քանզի այդ ծրագիրը երկար ժամանակ զբաղեցնում էր հայ հասարակական-քաղաքական միտքը, և Կիլիկյան Հայաստանի աշխարհիկ և հոգևոր իշխանությունները փորձում էին ռնյութականացնել այդ գաղափարը: Սպասելի էր, որ հեղինակը փորձեր տեսականացնել հայոց եկեղեցու նվիրապետական աստիճանականագությունն այն դեպքում, եթե այն զլխավորեր Անտիոքի պատրիարքական աթոռի իրավասությունը յուրացրած Ամենայն Հայոց հովվապետը, քանզի այս դեպքում փոխվել էր եկեղեցու նվիրապետական և վարչաթիվական կառույցը:

Նարժում ենք գիտական տեսակետից հեղինակը ճիշտ է վարվել, երբ հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական հարաբերությունների համատեքստում քննել է նաև Բալկանյան թերա-

կղզու, մասնավորապես Փիլիպուպուի հայ բնակչության խաղացած դերը, ի մասնավորի պար-
զաբանել շուվհաննես Աթմանի գործունեության հետ կապված մի շարք հարցադրումներ:

Ամփոփենք: Ա. Բոզոյանը գիտական հասարակությանն է ներկայացրել աղբյուրագիտա-
կան և պատմագիտական լայն հիմքի վրա չարադրված աշխատանք, որն իր կուռ կառուցված-
քով, հիմնախնդիրների ղրվածքով ու խորությամբ, անկասկած, իր արժանի տեղը կտրադեցնի
հայագիտության մեջ: Նրանում կիրարկված վավերագրագիտական նկարագրության և վերլուծու-
թյան մեթոդն ու սկզբունքները նոր ուղի կհարթեն միջնադարյան Հայաստանի հասարակական-
քաղաքական և եկեղեցական պատմության ուսումնասիրության համար:

Դ. Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պատմ. գիտ. բեկնածու